ճակատը անձնատուր ըլլալ։ Նորահնար դժոխային մեքենաներու փոթորիկէն վերջ՝ երբ անգղիական հետեւակազօրքը գերմաններու զակիշներուն մէջ մտաւ, հոն այլ ևս դիակներ և աւերածներ միայն գտաւ։ Զանազան անգամներ կրկնուեցան այդպիսի քստմնելի տեսարանները, բայց ի վերջոյ գերմանները սկսան զգուշական միջոցներու ձեռնարկել. սակայն դեռ բանբերու արշաւանքն մեծապէս աղետաբեր եղաւ թշնամեաց՝ որոնք միշտ սոսկումով կը ջանան խոյս տալ անոնց հարուածներէն։ Ինչպէս ըսինք բանքի դէմ ո՛չ պայթուցիկ առարկաներ և ո՛չ ալ հրանօթներուն գնդակները կարող են ներգործել, քանի որ ան անընդհատ կը տեղափոխուի և պողպատեայ տախտակներով զրահապատուած է։ Այս ահագին զանգուածն արդի ժամանակներուս բարանն և խոյն է՝ քանի որ նոյն իսկ ամրագոյն պարիսպները ծեծելով զանոնք կը խորտակէ։

Հոս աւելորդ չենք համարիր հաւաստելու թէ ստուգիւ «Արեգակին տակ նորութիւն մը չի կայ»։ և բանքի գիւտն ալ նորութիւն մը չէ։ «Polybe» հրապարակագիրը *Figaro* լրագրի մէջ յօդուած մը գտեղած է, յորում կ'ըսէ թէ բանքի նախնական նմոյշները Խորասպատի և Նինուէի խորքանդակներու մէջ ակն յայտնի կը տեսնուին։ Գերանդիներով և երկաթէ սուր գործիներով զինուած կառքեր էին։ Ցոյներն և Տրոյիացիներն Ագամեմնոնի ատենը կը գործածէին. իսկ Կիւրոս զանոնք ներմուծած էր Պարսից զօրաբանակին մէջ։

Կիւրոսի և հին ազգերու ատեն կնդրիտ (benzine) և մեքենական HP (որ է *horse power* = ձիու զօրութիւն) գոյութիւն չունենալով, իրենց սպառազէն կառքերը ձիերու զօրութեամբ առաջ կը մղէին։ Դարերէ ի վեր պատերազմիներու դաշտերն ահաբեկող այդ կառքերու զօրութիւնը խորտակելու հնարքը Միղղա՝ Գերմանիայի պատերազմի ատեն մտածեց և գործադրեց։ Ինքը, հրոռովմէական զօրքերը երկաթէ այնպիսի մականներով զինեց, որոնց ծայրերը քառակողմ սրածայր ծողերով կը վիրաւորային։ Միհրդատայ զօրավարը Աղրքեղայոս երբ հռովմայեցւոց վրայ յարձակել տուաւ գերանդաւոր սպառազէն կառքեր, Միղղա հրամայեց մականները գետին ցցել և անոնցմով կազմուած պատնէշներու ետեւը պատսպարուիլ։ Ձիերու և կառքերու բուռն զօրութիւնն հասնելով ցցուած մականներու անտառակը, հոն իրենց սաստկութիւնը ջախջախուեցաւ և շփոթութիւնը տիրեց։ Միղղայի թեթեւազէն լէգէոններն իսկոյն առաջ նետուեցան. շրջապատեցին սպառազէն կառքերը, քարերու և նետերու տարափով անխնայ կոտորեցին զրահաւոր կառքերու մարտիկները։ Թիչ կառքեր յաջողեցան հոռոզրիլ և փախչիլ հռովմայեցւոց նախատալից սպառնալիքէն։

«Polybe» կը հետեւցնէ թէ, պատերազմի այս երրորդ տարուան մէջ՝ Հինտէնպուրգ Միղղայի հանճարը չունի, և ո՛չ ալ գերման զինուորները հռովմէական լէգէոններու քաջութիւնը։

Հ. ՆԵՐՍԷՍ Մ.

ԱՐԵՒ Այս չորրորդ տարին է որ ժիր ու տոկուն ջանքերով կը հրատարակուի այս գրական, հասարակական եւ քաղաքական օրաթերթը. հետզհետէ կը ճոխանայ եւ կը զարգանայ՝ խմբագիր եւ յօդուածագիր ունենալով Եգիպտոսի գիտական անձեր։ Տն. խմբագրապետն է Պ. Վահան Թէքէեան, խմբ. եւ արտօնատէր Պ. Լեւոն Մելքոնեան. խմբագիրներ՝ Մ. Ս. Կիւրտեան, Վահան Մաղէեան, Արսէն-Երկանի, եւ ուրիշ զանազան անձեր։ Տարեկան բաժնեգինն է արտասահմանի համար Ֆր. 20.— դիմելու է

Rédaction du journal «AREV»

B. P. N. 600 ALEXANDRIE (Egypte)

digitised by A.R.A.R.@